

ՄՇԿԿ

ՀԱՅԵՍՏԱՆԻ ԳԵՂԵՍԻՍ ԵՐԵՎԱՆԻ

Տարեկան գինը 10 ռուբլի է, կես տարվանը 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպեկով.
Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ.
Մեր հասցեն. Тифлисъ, Редакция „Мшакъ“.
Կամ Tiflis, Rédaction „Mschak“.
Տ է Լ է Ֆ օ ն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերէն).
Ցայտարարութիւն ընդունվում է ամէն լիզուով.
Ցայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 10 կոպեկ.
Տ է Լ է Ֆ օ ն № 253.

«ՄՇԿԿ» ԼՐԱԳԻՐԸ

Ապրիլի 1-ից մինչև տարվայ վերջը
կարճեկայ ՈՒԹ ընթերցելու.

Դիմել Тифлисъ, редакция „Мшакъ“.
Այն անձինք, որոնք վճարել են մինչև
ապրիլի 1-ը և ցանկանում են շարունակել
լրագիր ստանալը, թող հոգ տանեն վա-
ղորօք յայտնելու այդ մասին խմբագրու-
թեանը, որպէս զի լրագրի առաքումը
չընդհատվի:

Ապառիկ բաժանորդագրութիւն չէ ըն-
դունվում:

ԲՈՎԱՆԴԱՅԻՆՈՒԹԻՒՆ

Ներքին ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մամուլ. Կեանքից
և գրականութիւնից. Փոքր ինչ մարդկային
շարժք. Նամակ խմբագրութեան. Ներքին լու-
րեր. — ԱՐՏԱԳԻՐՆԵՐ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒ-
ԹԻՒՆՆԵՐ. ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Թաթախում:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Մ Ա Մ Ո Ւ Լ

«Մուրճ» ամսագրի նոր լոյս տեսած համա-
րում պ. Տիգրանը մի քանի գծեր է հաղոր-
դում Կովկասի թուրք մամուլի կեանքից.
«Մամուլ» բառը մի քիչ մեծանշան է ներ-
կայ գեղարվեստ, քանի որ թուրք մամուլը, տա-
րագրականաբար, մի հաստ լրագրից է կախված,
և այդ լրագիրը Թիֆլիսում հրատարակվող
«Շարքե-Ռուս» լրագիրն է: Հետաքրքրական
է, որ լրագիր խմբագիր պ. Շարախովսկին
այս տարի փորձել է իր Թիֆլիսի ամենօրեայ
գազետին, բայց այդ բանը առ այժմ չէ աշոգ-
վել, որովհետև քիչ բաժանորդներ են գրվել
լրագրին: Այս առիթով պ. Շարախովսկին
գրում է.

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԹԱԹԱՅԻՆՈՒՄ

Շուտով եկաւ Նազարը գրի ուղեկցութեամբ:
Նրա հետ էր նաև իր մեծ կըրպար թոմարը,
որը եկել էր իմանալու՝ թէ ինչ է պատահել,
որ տանուտէրը Զատիկի պէս «աղիզ» լսուի և
բնիկն ինչ էր Նազարից ու կանչել նրան դի-
ւանատուն: Թոմարն ու Նազարը մի վայր
բանք մի փորձանք էին եկել խոստում. նրանք
գտնաւ էին անհաղթաբար ու չուզված ասա-
տիկ.
— Նազար, — դարձաւ նրան տանուտէրը նրա
հերս մտնելուն պէս, — պիտաւր քեզ էկատար
ուզել ա. պատրաստվի, որ ինչ էս սնաթիս
առանց դէս ու դէմի Ակուփի հետ միասին ճա-
նապարհ ընկնես քաղաք:
— Լաւ, նա ինչ ինչ ա անում էսէնց աղիզ
իրիկունք, հրամանը երբ ա եկել, — հարցրեց
գողգոթուն ձայնով Նազարը, որի վրա «էկատ-
ր» բառը ահաբեկելի ապաւորութիւն գործեց:
— Ո՞նց թա ինչ ա անում, հրէս է հրամանը.
տեսնում ես էս կանգնեալ, տեսնում ես էս
փեշատը. մի լաւ մտիկ տուր: Պիտաւր որ
կանչի, էլ հարցնի չեն, թա ինչ ա անում.
— Լաւ, ես ինչ եմ արել, որ կանչում ա
անը:
— Ո՞նց թա ինչ ես արել. գիտում չեմ, —
ասաց քաղաքացի տանուտէրը, — էդ ծախել
ես, փողը ջրումը դրել ու սուտ գանգատ տը-
ւելի, թէ գողացել են, որ ինչ ա — անմեղ
մարդկանցից ջարմա անես. էդ հիմի լաւ
պարզվի ա. դրա համար պիտաւր քեզ կան-
չում ա, որ կաշիդ պոկի:
— Ձեզ մտառդ, ես էդէնց բան չեմ արել,
— ասաց արտասահմանը կապը. — Նազարը, — Աս-
տուած ու երկինք վկայ են, որ էշս հէրմանի

Գրացի հայ եւ վրացի ազգի մէկ անկի ա-
մենօրեայ լրագիր ունեն: Մեր ալ այն մտածումն
ունենանք, որ մեր թերթը ամենօրեայ դարձնելով
վերոյիշեալ լրագիրներու նման, համապատասխան
կենտրոն մեր ընթերցողներին ծանոթացնենք:

Ճիշտ է այն իրողութիւնը, որ հայերն ու
վրացիները ամենօրեայ լրագիրներ ունեն:
Արդարացի է և ընդունալիս բնական նաև այն,
որ թուրքերն էլ պիտի ունենան ամենօրեայ
մամուլ: Բայց թուրք խմբագիրը մի բան է
մոռացել — այն, որ մամուլի կեանքի մէջ, ինչ-
պէս և ամէն մի կեանքի մէջ, առաջադիմու-
թիւնը թույլ չենք որ չէ կատարվում, այլ աս-
տիճանաբար, բայլ առ քայլ: «Շարքե-Ռուս»
անցեալ տարվանից է սկսել հրատարակվել,
իսկ նրանից առաջ չէր կային թուրք լրագիր-
ներ, ի՞նչ էլ հաշուենք մի քանի փորձեր, ո-
րոնք շատ ժամանակ առաջ տեղի ունեցան
Բագուում և Թիֆլիսում: Եթէ այսօր հայ մա-
մուլի մէջ կայ ամենօրեայ լրագրութիւն, դա
չէ նշանակում թէ այդ երեսը յանկարծ ծըն-
վեց, յանկարծ, առանց պատրաստութեան, իրող-
ութիւն դարձաւ: Ո՛չ, Հայոց մամուլի
սկիզբը Ռուսաստանում գրեց քառասունական
թւականներին, իսկ ամենօրեայ լրագիրը
«Մշակ» էր, որ 1872-ից հրատարակվելով,
շարքով մի անգամ, 1877-ին դարձաւ շա-
րքով երկու անգամ հրատարակվող, իսկ յա-
ջորդ 1978-ին համարեա ամենօրեայ, այսին-
քն շարքով հինգ անգամ. եւ այս վերջին
կերպարանափոխութիւնն էլ տեղի ունեցաւ
աւելի այն պատճառով, որ խմբագիրը միջոց-
ների տէր մարդ էր և յօժարութիւն ունէր
մեծ գործընթացներ անելու: Այսպիսով, առ-
նուազն երեսուն տարվայ մի շրջան էր հար-
կաւոր, որպէս զի հայ հասարակութեան մէջ
ամսագրութեան, շարքավորութեան պատ-
րաստվէր, ամենօրեայ լրագրութեան պահանջ
ստեղծվէր: Մեր պէտք է աւելացնենք և այն,
որ մեր երեսնամեայ շրջանում լրագրութիւնը
առհասարակ շատ ազգերի մէջ էր դանդաղ

հնձատեղից գողացել են. լսելն էլ յայտնի ա-
նէր սուտ ա, որ ասում են, թէ ծախել եմ. էս
աղիզ իրիկունք վկայա ա որ սուտ ա:
— Ինչ, ինչ, ինչ, — գոռաց տանուտէրը, —
ինքը պիտաւր սուտ ա ասում, դու ըզրթ.
էդ քանի գլխանի ես, որ մեր աղի մասին
էդէնց խօսում ես. դու նրա թայն էս, հը.
— Ինչ էս տաղ արել, դու մի էլ ես, նա մի ե-
րեկի մեծաւոր: Գո տեղը օր էս ետը Սերին
ա, Սերին. էլ ես քեզ հետ խօսալու բան չու-
նեմ: Մահտիսի, գրի, — դարձաւ նա գրագիրն,
— էս նմուխն մի հրապարտ գրի պիտաւր եմ,
որ Նազար Բագուումից օրը հրապարտ քոսը
ստեղ. նրան ուղարկելու առաւ Բեզ բխոված
պտեմ ուղարկել. բխոված, — դարձաւ նա Նա-
զարին ու մի երկու անգամ խից նրա գլ-
խին, ասելով շուն հարամաղաւ, շուն. դէ կեր,
դէ կեր...
— Նազարը չը բողբոջ. Թոմարն էլ չի բան
ծպտաց. նրանք երկուսն էլ մնացել էին ապ-
շած կանգնած:
Մահտիսի Առաքելը իսկոյն սկսեց գրել
«հրապարտ»:

Մահտիսին, որը իրան մեծ գրաբարգէտ
էր համարում, Նազարին ահաբեկելու համար
իր գրաբարի ամբողջ պաշարը արագբեզ հա-
նեց. մի քանի քայլէնց յետոյ ահաբեկելի թուղ-
թը պատրաստ էր արդէն:
— Մահտիսի, ինչ որ գրել ես քոլ ա. պրծի,
կարդա, հոգիս դուրս եկաւ, — ասաց Մատուրը:
— Կարդա, — ասաց տանուտէրը, — աղա, լաւ
լսի, հարամաղաւ, — դարձաւ նա Նազարին:
Մահտիսի Առաքելը կարդաց հետեւեալը. «Աս-
տուած երաճը մեծապէս գերազանց բարձրու-
թեան ու ողորմած բարեմեծութեան, բարե-
կեանքի իշխանացով իշխանի, ամենապատեա-
լագին ազգային մերոյ ու պիտաւր ուղաւորու-
կի երկրորդ գաւառիս. ամենախնայաւոր ուղ-
բաշի — տանուտէր ու ստորջին և բեօխվայ Ա-
ղան Աղիզովից ամենախնայաւորապէս հրա-
պարտ վստահ Նազար Բագուումից մասին, որ
հետեւ ուղունց գանազան նորին բարձրապա-
յա-»

դարձանում: Այժմ ժամանակները փոխվել են,
ամենօրեայ լրագրութիւնը արդէն դարձել է
մեծ ոյժ և պահանջ և կարելի է սպասել, որ
ներկայ ժամանակներում նախապատրաստա-
կան շրջանը աւելի կարճ լինի: Բայց միւս
կողմից պէտք է նկատի առնել թուրք ազգա-
բնակչութեան մտածող գրողութիւնը: Լրագրու-
թիւնը չէ կարող գրողութիւն պահպանել օղի
մէջ, նա էլ, ինչպէս իւրաքանչիւր կենդանի
մարմին, պիտի հիւթեր ստանայ: Եւ նրա
կենսաւնակութեան մասին մտածող դեռ պի-
տի պարզէ այն, թէ ժողովրդի մէջ հրքան
տարածված է մայրենի լեզուն, հրքան այդ
լեզուն տողուն է իրեն քաղաքակրթութեան
գործիք և այն: Ինքը, «Շարքե-Ռուս» տա-
լիս է մի փաստ, որ ընդուն է մանաւանդ հայ
մամուլի համար: Նրա մէջ աշխատակցում է
և մի հայ: Այս առիթով «Մուրճ» աշխատա-
կիցը նկատում է.

Ինչպէս կովկասի եւ Ռուսաստանի մէջ խմբա-
րող առաջին թերթերը հայ աշխատակիցներու բաւա-
կան մեծ թիւ մը ունին, նոյնպէս Պոլիս հրատարա-
կող թուրք թերթերու մեծագոյն մասը հայ աշ-
խատակիցներ եւ նոյն իսկ խմբագիրներ ունին: Օ-
րինակ Պոլիսի «Սարաֆ» թերթը ամենաառաջնա-
նիւթերն էր մէկուս հրատարակիչը Միհրան էֆենդի
կոչուող հայ մըն է. եւ իր գլխավոր աշխատակի-
ցները հայեր են: Հայը, ո՛ր կիմայի եւ ո՛ր հողի
կրպալ պ գտնուի, միջավայրի պայմաններուն յար-
մարտելու զարմանալի դիւրամեծութիւն եւ եռանդ
ցոյց կուտայ: Օրինակ, այդ «Սարաֆ»-ը Միհրան
էֆենդիի մեղքով այնպէս յաջող շաղի մը մէջ դը-
րում է, որ րոպէ թուրք մը, իր ամբողջ հայրե-
նասիրութեամբ, անկարող պիտի ըլլար մի եւ նոյն
յաջողութիւնը ձեռք բերուէ:

Այս Միհրան էֆենդիներն պէս մարդիկ
կան ոչ միայն Տայքի մէջ, վրացիներն էլ,
թուրքերն էլ ունեն և տալիս են այդպիսի
աշխատողներ: Առանց այն էլ այդ փոքրիկ
ազգութիւնները սակաւաթիւ պատրաստված
մարդիկ ունեն. և ասա տեղական մամուլը
չունի աշխատողներ. և նրան մնում է միշտ
կաղեկաղ շարժվել, յետ ու յետ մնալով...

Ճառութեան աղային մերոյ, առաւել դնալ զմօ-
րաւ, գիտաւ և զինկանաւ, քաղից զմեռել և
զկենդանի նորին պաշտօնաբարձրութեան ո-
ղորմած աղայի մերում: Ուզբաշի Աղան Նա-
զիզով վստա պատճառաւ անգրագիտութեան
իւրոյ հրապարտ. դայս փեշատի միմիայն
զինքով իւր:

— Ի՞նչ փեշատեմ, մահտիսի, — ասաց տա-
նուտէրը, հանկուժ գրագիրը իր պաշտօնական
կնիքը:

Այդ բոլորը լսելով, Նազարը քիչ մնաց թէ
ծնկաչոք ընկնի տանուտէրի ու իշխանների
ստալը նրանցից: Ներողութիւն ու գթութիւն
խնդրելու:

— Ինչիւր ու արեւի մատաղ, ուզբաշի, հրա-
պարտ. փեշատի մի, — ասաց նա, — դողդոջուն
ձեռքը մեկնելով դէպի տանուտէրը, — ուզբաշի,
ինչ էստեղ մարթի քո ձեռքով, ամա էդ հրա-
պարտի ընկելը մի տալ. իմ խիզախին խեղճ
եկի: Մեր աղէն ապրած կենայ. էս սնաթիս կը
գնամ, նրա հրամանը կը կատարեմ. նրա խօս-
քը սուրբ ա ինչ համար. հրապարտ. փեշա-
տի մի. Աստուծա խաթի ձեռի:

— Ձէ, փեշատի պտեմ. Սերի պտեմ գնալ է,
Սերի. դու միայն կերել էս ինչ ա, որ պիտա-
ւալ խօսքը ստում ես:

— Ահ, որ. Սերի գնամ իմ երեխեքը քո
եթիմները պտեմ դառնալ. գեղի տէրը, գեղի
ուզբաշին ես. ես էլ եմ ըրել, իմ երեխերն էլ.
դու պտեմ նրանց հոգալը քաղի ինչանից ետը.
խեղճ եկ իմ օղուշաղին, իմ երեխանցը. բաշ-
խի, ներողութիւն արա ինչ, ուզբաշի, — ասաց
Սերի:

Այդ շողորթութիւնն անգամ չը մեղմացրեց
տանուտէրին:

— Ձէ, կատրօնի պտեմ գնալ, կատրօնի.
խիզաղ էլ սոված կոտորվիլ պտեմ, — գոռում
էր նա:

Տեսնելով, որ տանուտէրը բոլորովին հանաք
չէ անում ու վտանգը մեծ է շատ, Նազարի
թուրք թոմարը միջամտեց. իրեն հասակով
աւելի մեծ ու աւելի փորձված մարդ, նա իս-

ԿԵՆՏՐՈՆ ԵՒ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԵՐ

II
Եթէ քարեգործները հիմնված
չէ ընկած անտառին քարձրաց-
նելու սկզբունքի վրա, նա անգ-
ղուտ է:

Հենրի Ջորջ

Հակասութիւններով ու հակադրութիւններով
լի է մարդկային կեանքը: Մի կողմը հարս-
տութիւն ու փառամոլութիւն, միւս կողմը
կարիք ու ջրաւորութիւն. մի տեղ փառանք
տներ — ապարանքներ, մի ուրիշ տեղ գետնա-
փոր որջեր, ողորմելի խրճիթներ. մէկը թան-
կազին ազամաններով է իր կուրծքը դար-
դարում, իսկ միւսը ազամանների փոխարէն
դառն արցունքի կաթիլներ իր դէմքին շա-
րում: Երջանկութիւն ու թշուառութիւն, հա-
րստութիւն ու ջրաւորութիւն իրար հետ լը-
ծողված անընդհատ առաջ են շարժվում և
իրանց ետեւից քաշում հասարակութիւն կոչ-
վող մասսան:

Բայց մարդիկ ուղեցել են դէթ մասամբ
լցնել այդ հակադրութիւնների անդունդը, նրա
վրա բարձրացնելով բարեգործութիւն կոչվող
մի կամուրջ:

Բարեգործութիւն... Որքան կեղծ, որքան
խաբուսիկ գէշ է դա նաև ճարպիկ մարդկանց
ձեռքին:

Ան մի վաշխառու, կեղերուհներով, ուրիշի
աշխատանքով բարեքներ դիզող մի հարուստ:
Բաւական է, որ նա չնչին գումար նուիրէ մի
որ և է բարեգործական նպատակով, որպէս զի
պատուի ու մեծաբանի արժանանալ, բարե-
գործի հոգակ ստանալ:

Ան բազմամարդ փողոցով անցնում է մու-
րացիներ, նրա դէմքը ամբողջապէս վիշտ է
արտայայտում, նրա հայեացքը թշուառութեան
խոր դրոշմ կրում: Մարդիկ տեսնում են այդ
և մի քանի սև կոպէկներ տալով իրանց պարտ-
քը վերջացած համարում: Դա էլ բարեգոր-
ծութիւն է կոչվում:

Կոյն հասկացաւ, թէ ինչպէս և ինչով կարելի
է սպառնացող «փորձանքի» առաջն անել. նա
յիշեց Նազարի բերած գինի-արաղը, որի մա-
սին գդիւր Ակուփը անշուշտ յայտնած էր գիւ-
ղի մեծերին, ու, եղբօր ականջին քիչ փսփոս-
լուց յետոյ, որոշեց գոնի բերած բարեքը, խը-
նամբների հրաւերը յետանգել և այդպիսով
մի կերպ խեղճ եղբօր անակնկալ «փորձան-
քից» ազատել:

— Լաւ, ուզբաշի Աղան, շինի իշխաններ,
— ասաց թոմարը, — արեւելքն իմա ան, ձեզ եմ
տալիս. Սերի չի, որ Սերից էլ զէն ուղար-
կեցէր. ես արա խիզախին կը պահեմ: Առաջ
եկէք գնանք մի պատառ հաց ուտենք, թա-
թախվենք. աղիզ իրիկու ա, ձատիկ ա. ոչ մենք
ենք թաթախվել դեռ, ոչ դուք: Աղբաթիներ
մարդիկ, ինչ էք էղբօր, շինի համար ցուում,
չարաբովում, ինչ. չուա էսէնց աղիզ իրիկուն
էլ ձեզ խնայում չէք. փեշք-ցերեկ ձեռ կեան-
քը մաշում էք գեղի ու ժողովրդի համար: Ե-
կէք գնանք. Նազար, առաջ ընկի. հայկան ես,
հայկան, — ասաց նա եղբօրը, — էս մարդկանց
կանչի, տար, պատիւ տուր, ուտացու, խմաց-
րու, ու ետնայ Աստուած ինքը քեզ բօմակ կը
հասնի, կօգնի:

Նազարը իր կողմից ևս հրաւիրեց ու առաջ
ընկաւ: Տանուտէր Աղան ուղեց մի քիչ էլ
նազ անել, աւելի խնդրել տալ, իր ամբողջ չա-
փով, ցոյց տալ, բայց Մատուրն ու Մարութը
հտեկից բռնեցնելով բոթեցին նրան առաջ,
ասելով.

— Ձայնդ կտրի, տաղ արած առաջ ընկի.
հորս հաղոր ձանկ և ընկի. պրծի, գնա, էլ
կանգնի մի. սոված ու ծարաւ մեռանք:

Տանուտէրը դուրս եկաւ դիւանատանից. նրան
հետեւեց շախմատը: «Հրապարտ» մնաց ա-
ռանց «փեշատի» գրագրի ձեռքին:

Նազարը շտապով գնաց տուն պատրաստու-
թիւն տեսնելու: Թոմարը ուղեկցեց հիւրերին,
դրուցելով նրանց հետ:

— Գո հօրն օղորմի, Թոմար, — դարձաւ տա-

Հանդիսաւոր տօն է՝ Ծնունդ, Չատիկ, Նոր-տարի։ Ուրախութիւն, հարուստ տներում ճոխ սեղաններ բացված, բայց ահա ներքեց հըն-չում է վշտապին ձայնը՝ ողորմացի՜ անուն անհետ աղիւսի։ Խրախճանքը բազմապէս ընդ-հատուած է. սեղանի փշրանքներից բաժին են տալիս մուրացիկներն և ետեւից գուռը պինդ փակուած, որպէս զի նորից անհանգստացող-ներն ներս չը մտնեն։ Եւ դա բարեգործութիւն է համարվում...

Բայց այդ ձեւերով բարեգործութիւն կատա-րելիս մտածում ենք արդեօք, թէ գործ ու-նենք մարդ արարածների հետ, թէ ցնցոտի-ների կոյտի տակ էլ թագնված է մարդկային սիրտ՝ իր եսասիրտութեամբ ու պատուասիրու-թեամբ, թէ մեր կողմութիւնը, սանութիւնը կարող է վերադարձնել դառնայ և աւելի զգալի դարձնել թշուառի վիշտը, կարօտեալի դառն վիճակը։ Երբէք։

Մտածում ենք, արդեօք, թէ մեզանից իւ-րաքանչիւրը իբրեւ հասարակութեան անդամ յանցաւոր է, որ կեանքում գոյութիւն ունի չբաւարարութիւն, դառնութիւն, թշուառութիւն։ Երբէք։

Այն, յանցաւոր ենք, որովհետեւ մարդիկ ի-րանք են միմեանց հաղածում, հարստահարում, ծնում ու թշուառացնում։ Վերութիւնը մայր է ամենի համար, ասում է մի նշանաւոր հե-ղինակ, միայն հասարակական պայմաններն են շատերին փչացնում կամ դժբաղդացնում։ Արդեօք, աշխատում ենք փոխել այդ պայման-ները կամ գոնէ մեղմացնել նրանց ազդեցու-թիւնը։ Երբէք։

Մանր բարեգործութեան բոլոր տակ մենք ծածկել ենք ուղում սօցեալական մեծ չարիքը։ Բայց դա ինքնախաբէութիւն է։

Զը պէտք է մոռանալ, որ մեր կօպէկները, տօնական սեղանի թափթիփուն փշրանքները միայն առ ժամանակ մեղմացնում են մի քանի կարօտեալների վիշտը. իսկ չարիքի արմատը մնում է անփոփոխ, որպէս զի նորից մեծացնէ թշուառների բանակը և նորից բարձրացնէ նրանց հեծեծանքի ձայնը։

Պարզ է, ի հարկէ, որ այդ չարիքը զար-գացել է երկար ժամանակվայ ընթացքում, տնտեսական որոշ պայմանների շնորհով։ Հար-կաւոր են ուրեմն երկարատե ջանքեր, որպէս զի նա արմատախիլ լինի և կեանքի հակա-դրութիւնների անդունդը լցվի «եղբայրու-թեան ու հասարակութեան» գաղափարներով, որպէս զի արդար աշխատանքը ստանայ իր շարժանի հաստեղծումը։ Իսկ մինչև այդ երանե-լի օրը պէտք է բարձրացնել ընկած անհատ-

նուտէրը Թոմասին, դրուստ եւ ասում, որ մեր կեանքը մարում ենք գիւղի ու Ժողովուրդի համար։ Ինչ էս լուծը մեր հասարակութիւնը իմ վզին ա դրել, մի գին՝ օրի երես չեմ տե-սել, գիշեր-ցերեկ իմ իշխանների հետ միասին չարչարում եմ հասարակութեան օգտի հա-մար։ Զման հավիւր և ու մարզվել։

—Իսկ ես էդ օրին չեմ, ես հանգիստ քուն ունեմ, խի ես մենակ քեզ գովում,—ասաց «Բիւմարկ» Մատուրը,—էս վերջի քառասուն տարւում տասն-տասնինգ ուղարկել ա փոխվել, իսկ գեղի ծանր բեռը միշտ ինձ վրա ա ըլել ու միշտ ինձ վրա։

—Մենակ ինձ չեմ գովում,—ասաց տանու-տէրը,—գու էլ ես իմ օրին, Մարութն էլ, բո-լոր իշխաններն ու մեծամեծներն էլ. թող հա-սարակութիւնը գիտայ ու գնահատի է, գիտայ ու գնահատի։

—Հասարակութիւնը գիտում ա, գնահատում ա միշտ, ուղարկել,—ասաց Թոմասը,—Աս-տուած քեզ քո մեծամեծներով մեր գեղի հա-մար միշտ սաղ պահի. առանց ձեզ գեղը մի օր անգամ եօղ ա լի գնալ, կը քանդվի, քա-րուքանդ կըլի։ Կանոն արէք մի, կանոն. հրե-տին գնանք Աստուծո տուածով թաթախվենք։

Նազարի խղճով խրճիթը հազիւ տեղաւո-րեց անկող հիւրերին։ Մկովեց կեր ու խումը. ուտում էին ձու, ձուկը, պանիր, կանաչի, փլաւ, արագիլի արորթակով, որին «խեռային ուռնացող ծաղկալոխն» անգամ կարող էր նա-խանձել։ Տկնորներից ամենից առաջ ձեռք ա-ռան արագիլը։ Երբ նա կիսով չափ դատարկվեց, Նազարը դուրս քաշեց պուճախից գինու տըղ-ձորը, յուսալով այդպիսով արագիլ կէսը փրկել։

Մատուրը, նկատելով այդ, ասաց՝

—Նազար, վազդի մի, դրա գազնանէն ետ-նայ կաննեք դեռ. թող մի առաջ արագիլ բնդ-բօրը պրծնենք։

«Բիւմարկ» Մատուրը սիրում էր օտար բա-ռեր գործածել, որոնց միտքը մեծ մասամբ չէր հասկանում. այդ նրա հեղինակութիւնը բարձրացնում էր ամբոխի աչքում։

ներին և կանգնեցնել ինքնօգնութեան ճանա-պարհի վրա։

Դրա նպատակայարմար միջոցն է ընկերակ-ցական գործունէութիւնը։ Գիւղերում ու քա-ղաքներում, գիւղացիները, բանուորների ու աշխատաւորների շրջանում հիմնեցէ սպանողա-կան, փոխատու-խնայողական, աշխատանք մատակարարող և այլ նման ընկերութիւններ, սուէք դրանց միջոցներ և այն ժամանակ օրէցօր չեն մեծանայ «անտուն, անտէր աղ-քատները» շարքերը, չի ստուարանայ թշուա-ռութեան հեծեծանքը, որովհետեւ այդ ընկերու-թիւնները միշտ էլ իր ժամանակին օգնութեան ձեռք կը մեկնեն ձախորդութեան կամ մի որ և է դժբաղդութեան զոհերին և թող չեն տայ, որ նրանք աւելի ընկնեն, վաշխառուների ու անտէրութեան քերի դառնան և վերջը նոյն իսկ մուրացիկանութեան ճանապարհին դիմեն։ Դրանք աշխատանք կը տան անգործին, փո-խատութիւն—կարօտեալին, բժշկութիւն—հի-ւանդին, խնամք ու հոգատարութիւն—որբին, անտէրին։

Այդպիսի կազմակերպութիւններ առաջ բե-րելը, ի հարկէ, ունի իր դժուարութիւնները, պահանջում է մեծ եռանդ, տոկոսութիւն. բայց չէ որ վարդն էլ առանց փշի չէ լինում։ Ուրեմն չը պէտք է վախենալ դժուարութիւն-ներից, այլ ամեն կերպ և ամեն տեղ արծար-ծել օգտակար գաղափարը, քաջաբերել նախա-ձեռնողներին, պարգև, հասկացնել չը հասկա-ցողներին։

Մեզանից աւելի զարգացած, աւելի քաղա-քակրթ երկիրներում վարուց արդէն հասկա-ցել են այդ իրողութիւնը և օրէցօր բազմաց-նում են ընկերակցական կազմակերպութիւն-ները։

Այնտեղ նոյն իսկ սովորական բարեգործու-թիւնը անհամեմատ աւելի բարձր ու նպատա-կայարմար հիմքի վրա է դրված, քան թէ մե-զանում։ Իբրեւ ապացոյց վերցնենք մի նմուշ Անգլիայի և Ամերիկայի կեանքից։

Ե. Թ.

ՓՈՔՐ ԻՆՉ ՄԱՐԿԵԿԱՅԻՆ ԵՆՈՐՀԷ
(Նամակ Բագուից)

Ստիպված եմ դարձաւ խօսել երեխաների խնամատար ընկերութեան մասին։

Այդ աւելի քան համակերելի ընկերութեան մասին պէտք է լուրջ մտածել և կարեւոր ու-շարութիւն դարձնել, թէ՛ ոչ նա կը մօտե-նայ քաղաքային և վերջնական անկման։ Իսկ

Շուտով վերջացրին արագի «բաղբօրը», այ-սինքն դատարկեցին նրա տկճորը՝ ու սկսեցին գինու «գազնանէն»։

—Հրեմին եկ է, ա իմ իգիթ ախպէր, նա-մուս ու դէյրաթ, կեանք ու հոգի տուող տըղ-ձոր,—ասաց խորին ոգևորութեամբ Մարութը, երբ գինու տկճորը եկաւ ասպաղէ,—կեանք-ըսում մեղք շատ եմ գործել, փիտում եմ, որ ախիրն ու վերջը դժոխքը պտեմ գնալ. ամա որ դու կշտիս ըլես էն աշխարհում, տկճոր ջան, ա իգիթը աշի, դժոխքն ինձ համար դրախտ կը դառնայ։ Ինչէնց չի, Մատուր,—դարձաւ նա Մատուրին,—աշխարհիս լազաթը գինի տկճորումը չի։

—Եղէնց ա, Մարութ, եղէնց. որտեղ տըղ-ձոր կայ, դրախտ էնտեղ ա. տկճորի հետ հազար տարի դժոխքումը կ'ապրեմ, ամա ա-ռանց նրա դրախտումը մի օր չեմ ապրել, մի օր,—ասաց «Բիւմարկ» Մատուրը,—Նազար, գինին ամա, պրծի, ինչ ես տաղ արել, ծա-րաւ մեռալ,—դարձաւ նա Նազարին։

Նազարն սկսեց ածել գինին, «մեծամեծներն» սկսեցին խմել, բայց ոչ այն փորը բաժակներով, որոնցով խմում էին արդող, այլ մեծ գաւաթնե-րով։ Գլխի Ակուփին խմացնում էին իր փա-փախով ու գուարճանում այդպիսով։ Բէֆը իր գազաթնակէտին հասաւ, երբ արքաղաղը կան-չեց. յայտարարեցին, որ նաւակաւորիկը արա-զաղի կանչելով վերջացաւ ու կարելի է միս ուտել. ասացին, որ հաւի մսից պարտաւած խորովածը գինու հետ շատ լաւ կը լինի։ Տա-նուտէրի հրամանով գլխը դուրս թռաւ տա-նից։ Շուտով նա վերադարձաւ հաւի ութ հատ արեւաթաթախ դիակներ ձեռքին, առանց բաշխելու յայտարարելով, որ Նազարի հաւա-րուածում միայն արքաղաղին է թողել կենդանի՝ առաւօտները տնեցիներին շուտ վեր կացնե-լու համար։ Նազարի ու Թոմասի կանայք սիւ-նի ետեւում արտապիկով թեփոնցին հաւերը ու խորովեցին, անկող հիւրերի գլուխները ա-նցնէին հողիով։ Մինչև լուսաբացը դեղի մեծերը ուտում էին հաւի խորովածը ու խը-

ղա Բագուի համար աւելի քան խայտառակ ե-րեւոյթ կը լինի։

Ընկերութեան վարչութեան բոլոր ջանքե-րը անգոր են լինում դիմադրելու կարիքի մե-ծութեանը և օր օրի վրա նրա նիւթական դը-րութիւնը վատանում է, իսկ կարօտեալների, օգնութեան կարեկցողների թիւը, ընդհակա-ռակը, մեծանում է։

Ինչ անել. այդ հարցը, յուսահատական, սպանող այդ հարցը կախված է վարչութեան անդամների բոլորի ճակատից և, չը նայած բոլորի յուսահատական ջանքերին, ստիւգն աշխատանքին, խնդիրը դարձնալ բայց է մնում և բացակայում է միջխարական պատասխանը։

Ընկերութեան հաստատութիւնները՝ կօշկա-կարական արհեստանոցը, կար ու ձեւի դպրո-ցը և այլն, երեսի վրա են ընկած, որովհետեւ վարչութեան անդամները իրանց բոլոր ոյժերը լարել են միմիայն նիւթական միջոցների վրա, որպէս զի հնարաւորութիւն ունենան պահպա-նելու ձրի և էփանագին ճաշարանները (ճաշը օրական 2 կօպ), որովհետեւ օրական ճաշում են մի քանի հարիւր որբ, անտէր, չբաւար ծնող-ները երեխաներ և հնարաւորութիւն են ունե-նում սուբսիդիոյ ապաստան, աղքատների մէջից ուտելու միջոցներ փնտռելուց։

Վարչութեան ամբողջ կազմը ինձ համար պատկերանում է ինչպէս մի պատերազմական բանակ, ամեն կողմից պաշարված, որը յուսա-նաւորական կորու է մղում չը տապալվելու, անձ-նատուր չը լինելու համար։

Ո՞վ է այդ թշնամին։

Ջրաւորութիւնը, բաղցը, փողոցի աւերող միջնորդը, որոնք սպանում են իրանց ձի-րաններէջ խլած երեխաներին նորից վերա-դարձնելու իրանց ծոտ։

Եւ, ցաւ է ասել, Բագուի քաղաքած հասա-րակութիւնը ամեն եռանդ գործ է դնում ար-դարացնելու իր այդ դրութիւնը։

Այդ թանգ կօպէկները, որոնք ձեռք են բեր-վում անպիսի դժուարութիւններով, մի որոշ սահմանափակ շրջանի են պատկանում, որից դուրս հասարակութիւնը ոչ մի մասնակցու-թիւն չէ ունենում։ Բայց այդպիսի դրութիւնը քնական չէ և չէ կարող յարաւել լինել։ Այդ պիսի անտարբեր վերաբերմանը առջև կը խորտակվի ամեն եռանդ, կը ցրվի ամեն յոյս ու հաւատ և կը սպանվի ամեն տեսակ նախա-ձեռնութեան ոգի, իսկ այնուհետեւ ցան ու ցը-րիւ կը գալ բարի գործը, որը վերջին ժամա-նակները պահպանում է յամառեռանդի շնոր-հիւ միայն։

Ընկերութիւնը ճնշված է պարտքերի տակ,

մում գինին։ Մի քաղէ քիչ էր մնացել, թէ կանայք բացարձակ բողբոքին, բարձրաձայն հողէն հիւրերի գլուխները, բայց Թոմասը, շուտ գլխի ընկնելով, բանն ինչու՞ն է, լռեց-րեց նրանց, կամայքով անելով սխալ ետեւում «Տաղ ըրէք, սո՛ւս, ձէն ու ծպտուն միջ հանիլ, շան աղիկէք. իրզանը թող ցամաք հաց ուտեն, էս մարդկանց պատանեցէ. ութ հաւի տեղ որ տանութ հաւ էլ ուտեն, տաղ ըրէք. Նազա-րին Մերիք թափում ենք է, թափում, նրանց պատիւ տալով. ձեռք հէրն անիծած, հասկացէք, տաղ արէք, որ կիթ կոխէ էլ թովից դուրս քաշեն մորթին, քա չի ծպտաք, թէ չէ ձեզ կը կոտորեն»։ Թեղճ կանայք լռեցին ու շարու-նակեցին հաւի միսը խորովել, այն համող-մամբ, որ այդպիսով Նազարին Մերիքից աղա-սում են։

Երբ հիւրերի բէֆը չաղացաւ սաստիկ, երբ տկճորների շնորհով նրանց սրտերը փափկե-ցին, բոլորն էլ միաբերան խնդրեցին տանու-տէրին տեղել Նազարին։ Տանուտէրը, որը նոյնպէս շատ փափկել էր, ներեց. հրամայեց զրազրին պատառոտեղ հոշակաւոր «հրամայող», որի հիմնագործութեան շնորհով այնքան գինի-արաղ խմեց. Նազարին պիտուաւ ծոտ ու-ղարկել խափանեց, խոստանալով բարեխօսել նրա համար պիտուաւի առաջ ու նրա զօրա-ւոր աշակցութեամբ առնել հասանելից գո-գրեցի անհետացած աւանակի գինը։ Տկնոր-ները այնչափ խոր տղաւորութիւն էին դըր-ծել տանուտէր Աղաջանի վրա, որ նա անկող-ցաւ յայտնեց Նազարին նրան ծեծելու համար, նոյն իսկ ներողութիւն խնդրեց նրանից ու ինքն իրան պարտաւեց, անիծեց իր ձեռքը, որը լուր իր վատ սովորութեան հրաւերից ա-ռաջ մի քանի անգամ ուժգին թափով դիպաւ Նազարի գլխին։

—Էս ձեռք չի քեզ տո՛ւել,—ասաց տանու-տէրը, ցոյց տալով իր աջ ձեռքը Նազարին,—դէ չորանայ առ. հրէս է, տես. իմ էս ձեռք չորանայ, որ քեզ տուել ա, քեզ դիպել տ, լաւ եմ ասում. դէ հաւ ինձմա՛կը նեղուումը չեմ

նա ընկճված է ընթացիկ շարունակ աճող ծախսերի տակ և պէտք է լուրջ և մարդկային վերաբերմունք, որպէս զի վտանգից ազատվի։ 180 անդամների 540 բ, անդամավաճար և տա-րեկան մի քանի «յանուն գաղափար» պարե-րեկոյթները չեն կարող թեթեւացնել ծախսերի ծանրոյթը և դրա համար հարկաւոր է, որ հա-սարակութեան ունեւոր մասը իր հոգացողու-թեան առանձին առարկայ դարձնէ այդ ամեն կողմից համակերի գործը և ոտքի կանգնեցնէ նրա քաջայված կազմուածքը։

Պէտք է առատ նուիրատուութիւն, հարկաւոր է ստեղծել մշտական աղբիւրներ, անհրաժեշտ է եռանդուն ինիցիատիւ, այլապէս գործը կամ կը քայքայվի կամ այն դրութեան կը հասնի, որ կը դադարի օգտակար լինելուց ու կը դառ-նայ մի հազիւ շարժող դիակ։

Բագուի հասարակութեան վրա բարոյական պարտականութիւն կայ իր մարդկային շնորհքը ցոյց տալու։

Բագուի հասարակութեան միջից բազմաթիւ ձեռնաս մարդիկ կան, որոնք կարող են ի-րանց առանձին հոգացողութեան առարկայ դարձնել փայլուն նպատակով օժտված, հիւանդ ընկերութիւնը։

Այլապէս ամօթ և խայտառակութիւն է։

Ռ. Յովհաննիսեան

ՆԱՄԱԿ ԽՈՒՍԿԻՆԻՍԻՆ

Թիֆլիս, մարտի 23-ին
Խնդրում ենք այն անձանց, որոնց մօտ կան հա-ւարած գումարներ անպիտան լինում վարդապետ Խոնդախանի գեղեզմամբաւոր համար, շտապէն հասցնել մեզ այդ գումարները։ Յոյս ունենք, որ միջ մայիսի վիշտը պատրաստ կը լինեն գերեզմանա-քարը և երկամբ վաղափառաւոր ծառայակիւն ման-րաման հաշիւ կը ներկայացնեն հասարակութեանը թէ հաւարած գումարների եւ թէ ծոխի։

Լ. Սարգսեան
Ս. Կիսիցեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԻՆ

Աչքի առաջ ունենենալով, որ պատրաստա-կան բեմի առաջիկայ գործողութիւնների շըր-ջանը պէտք է կենտրոնանայ հիւսիսային Կօ-րէայում և հարաւային Մանջուրիայում, մենք պատրաստում ենք այդ տեղերի մամուլում Բաւեգը, որը կը գետնովի «Մշակի» համար-ներից մէկում ապրիլ ամսի սկիզբներում։

Մի անձից, որը չէ ցանկանում անունը յայտնել, ստացանք չբաւարների օգտին տասը բուրլի։

Ես չեմ մեղաւոր, էս չորացածն ա մեղաւոր։

—Ասա խի ա չորանում,—բողբոքեց Թոմա-սը,—ձեռք դիւար կենայ, ուղարկի. քո ձեռն ա, որ էս գեղը կատարւում ա. զօրաւոր կե-նայ քո ձեռք, զօրաւոր։ Ախպէս իմն ա,—լաւ ես արել, որ տուել ես. ես տէք եմ. մեր ուղ-բաշին ես, իրաւունք ունեւ. որ քեզ լսում չեն, պէտք ա տաա, պէտք ա թակել։ Մեղ չէս ուսանթի կարկաժը, շատ ա պինդ. ինչքան ասա, դէմ կը կենայ, կոտորել չի. տուր, որ քեզանից վախեն ու քեզ լսեն, տուր արեւային։ —Հարաւթ քի, մեր ուղբաշին ես, իրա-ւունք ունեւ, պէտք ա տաա,—ասաց Նազարը,—որ մեզ քօշ անես, որ չը տաա, չը թակես, մենք իրար միս կուտենք. ես քեզանից խկի նեղանում չեմ։

—Աղա՛, ուղբաշին ձեռքը պաշի, ուղբաշին ձեռքը պաշի, որ քեզ էդ փորձանքից աղա-տեց,—հրամայեց Թոմասը Նազարին. Նազարը կատարեց եղբօր հրամանը. համ-բուրեց տանուտէրի ձեռքը։ Այդ անակնկալ պատուից անսուտէրը յուզվեց. սպասիկ ու համբուրեց Նազարի ձախկնուր։

Առաւօտանա ժամը սկսվելուն մօտ էր, երբ գինու տկճորը խապաւ դատարկեց։ Հիւրերը վեր կացան վերջապէս ու ցրվեցին, որ ժամ գնալուց առաջ մի քիչ «աչքահոգիտան», հանգստանալ «տաղ գիշերը».—ինչպէս խիտ լրջօրէն ասաց «Բիւմարկ» Մատուրը ցրվելիս, —յօգուտ հասարակաց չարչարելուց յետոյ։ Նազարն ու Թոմասը, խորին շնորհակալու-թիւն յայտնելով տանուտէրին, իշխաններին ու նրա բոլոր «մեծամեծներին», ճանապար-հեցին նրանց մինչև փողոցը։

Երբ անկող հիւրերը գնացին, Նազարի խղ-ճով խրճիթում ազիւ օրվայ համար ուտելու ու խմելու ուշին չը կար այլ ես. դատարկ էին հացի տաղը, իգի ու ձկան պուրկները, բընձի տողալը, ձուաների թթոցը ու պանրի ըսակը, դատարկ էին չարաքատիկ անկնոր-ները, դատարկ էր նոյն իսկ հաւառանը...

Սա. Տէր-Աւետիքեան

